


891.99

U-91

08 DEC 2010

ՍԿՍՆԱԿ ԸՆԹԵՐՅՈՂԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն



ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՄԵՐԺՎԱԾՆԵՐԻ
ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

891.99
Ա-91

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՅՕՐԵԿԱՆ

39993

01 JAN 1936

97.99
2-91

ՄԿՐՏԻԶ ԱՐՄԵՆ

ՄԵՐԺՎԱԾՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

513

Հ Ս Խ Հ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ Ծ 1 9 3 6



Պատ. խմբ. Սիրա
Տեխ. խմբ. 8 Խաչվաթնյան
Սրբազրիչ՝ 4. Դուռլառնյան



Գլավիտի լիազոր Ս-503, պատվեր 548,
Հրատ. 3696, տիրաժ 3000
Գեահրատի տպարան
Յերեվան, Մ Գնունի, 4



Հանձնված է արտադրության 10 ապրիլի 1936 թ.
Ստորագրված է տպելու 23 ապրիլի 1936 թ.

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

МКРТИЧ АРМЕН
ВСТРЕЧА ОТВЕРЖЕННЫХ
Гиз ССР Армении, Эривань, 1936

Մ Կ Բ Տ Ի 2 Ա Ր Մ Ե Ն

Մ. Արմենը ծնվել է 1906 թ. Լենինականում։
Հայրը յեղել է մանուֆակտուրայի խանութի գործակա-
տար, մայրը կար անող բանվորուհի։ Սովորել է ծը-
խական դպրոցում, ապա մտածաբ գիմնազիայում։

Գրելն սկսել է 1923 թվից։ Առաջին գրվածքը՝
«Անդրկովկաս» վերնագրով բանաստեղծութունը տըպ-
ված է Լենինականի «Բանվոր» թերթում։

Վերջում նա բացառապես գրում է արձակ։ Արմենը
չատ է գրել յերիտասարդության, կոմյերիտականների
կյանքից։ Նրա «Սկսուտ № 89» և «Առաջին պատկոմ-
ները» գրքերը պատկերացնում են պատանիների անց-
կացրած դաժան կյանքը Ամերիկյան վորբանոցներում,
և նրանց կենսուրախ կյանքը պիոներական շարքերում։

Արմենը մեր բեղմնավոր գրողներից է։

1935 թ. լույս տեսավ նրա «Հեղնար աղբյուր»
վեպը։ Բացի հիշվածներից նա հրատարակել է «Գա-
ղաթների յերգը», «Զուրեյդա», «Պատմվածքներ» աշ-
խատութունները և այլն։

Մ Ե Ր Ժ Վ Ա Ծ Ն Ե Ր Ի Հ Ա Ն Դ Ի Պ Ո Ի Մ Ը

1

Գրագիրն ատամները քշփորելուց և մի քանի անգամ կուշտ զկրտալուց հետո, լեզուն պատասցրեց լնդերով մեկ, հազաց և գրիչը ձեռքն առավ: Հայրս և մայրս, վոր անթարթ նայում եյին նրան, սթափեցին, ժպտացին: Նույնիսկ յես, ութնամյա յերեխա, ընդհատեցի գրքույկներով զբաղվելը, զգալով, վոր հանգիստավոր վայրկյանն արդեն վրա յե հասել:

Գրագիրը գրիչը թաթախեց իմ աչակերտահան թանաքամանի մեջ, մոտեցրեց թղթին և նախքան առաջին, Ֆիզուրավոր տառն աջտակ դրոշմելը, գրչածայրը մի քանի անգամ Փռ֊Փռացրեց թղթի վրա. — կարծես գրիչն ուրուր լիներ, վորը վառեկ փախցնելուց առաջ դեռ մի քիչ ճախրում ե բակի վրա: Հետո հանկարծ, թղթի վրա յերեկաց «խնդրագիր» բառի առաջին տառը՝ գրված ամենավայելուչ ոուսերեն ձեռագրով: Սպիտակ, մեծ խնդրա-

Թերթը, վոր լուռ ու անհասկանալի ընկած էր սեղանի վրա, սկսեց ծածկվել սրաստիպանի և նույնքան անհասկանալի տողերով:

— Յերեխայի անձնը, — սրահանջեց գրագիրը քիչ հետո:

Հայրս տվեց իմ անունը: Յե՛վ նույն բուս-
յին, իմ գունատ, վոզեվորված դեմքի վրայով
անշուշտ մի հանդիսավոր արտահայտութիւն
անցավ: Առաջին անգամն էր, վոր իմ անունը
գրվում էր ռուսերեն, գրվում էր այդքան գե-
ղեցիկ ձեռագրով, այդպիսի նշանավոր թղթի
վրա: Վո՛չ, այսօրվանից յես այլևս յերեխա
չեմ և հարկավոր ե, վոր ինձ մի քիչ ավելի
խելոք պահեմ, թեև յես յերբեք աչքի չեմ
ընկել հատուկ չարությամբ:

— Բայց, — անկարծակի առաց գրագիրը՝
գործն ավարտելով, — նորից եմ ասում, Գրեգոր
Չան. — Լազարյան ձեմարանում ընդունում են
միայն և միայն հոգևորականների, բարեգործ-
ների և ուրիշ հասարակական գործիչների յե-
րեխաներին... Յեթե տղայիդ չընդունեցին,
այդ բանն իմ խնդրագրիս չվերագրես: Յես
կյանքումս այսքան գեղեցիկ վոճեր բանեցրած
չունեմ: Իսկ ձեռագիրը՝ այդ արդեն, ինքդ ել
ես տեսնում...

Յե՛վ սեղանի վրայից վերցնելով մեծ թեր-
թը, բռնեց հորս քթի առաջ:

— Քանի՞ տարի հետո սրաստիպան կստա-
նանք, — անխտահ հարցրեց մայրս:

— Պատասխանը չուտ կգա: Իսկ յերեխա-
յին, — յեթե խնդիրը հարգեցին, — կընդունեն
հասունանալուդ հետո, մի տասը-տասնհինգ
տարի անց: Որենքն այդպես ե...

Մայրս ջերմեռանդ հայացքով, նայեց ա-
ռաստաղին:

Յես նույնպես նայեցի:

2

Պատասխանն ստացվեց ութ ամիս հետո:

Մայրս, վոր տանը լվացք էր անում, անո-
րոշ նայեց փոստատարի դեմքին, կարծես կա-
կածելով, վոր նրան հայտնի յե ծրարի պարու-
նակութիւնը, ապա չհամարձակվելով թաց
մատներով վերցնել նվիրական ծրարը, ձայն
տվեց ինձ: Յես դուրս վազեցի և ծրարը վեր-
ցրի:

Փոստատարը գնաց:

— Բայց անե՞մ, մայրիկ, — հարցրի յես ան-
համբերությամբ:

— Աման, աստժու սիրուն, ձեռք չտաս:
Քու ի՞նչ գործդ ե... Գնա հորդ ասա, թող
գա...

Յես դուրս թռա և գլխապատառ վազեցի խա-
նութ, ուր աշխատում էր հայրս: Ներս մտնե-
լիս տեսա, վոր նա գրադված է: Նա նույնպես,

տեսալ ինձ, բայց ուշադրություն չդարձրեց: Վաճառասեղանի մոտ խոնված գնորդներից ամեն մեկը մի բան էր ուզում.—վորը դեյրացու, վորը «չամաշուրի» կտոր, վորը մահուդ, վորն «ամերիքան»... Հայրս իր ոգնականի հետ հազիվ էր հասցնում՝ դարականերից իջեցնել ցանկացած կտորը:

— Արի տեսնեմ ինչո՞ւ յես յեկել—լսեցի հանկարծ խանութի տիրոջ,—Ափոյենց Հովհաննես աղայի ձայնը դրամարկղից:

Յես մտտեցա: Նա հերթական գնորդից բոտացալ փողը, հաշվեց, մատներով խփեց ինչ վոր կոճակների, պտտացրեց ինչ վոր կոթ, լուրջ ու գործունյա չխչխկաց, գնդընդաց փայլուն, ամտոճատ դրամարկղը և չեկը դուրս նետեց:

— Լազարյան ձեմարանից Գամակ ենք ստացել.—հայտնեցի յես:

Հովհաննես աղան, վոր պատգաստվում էր նորից պտտացնել փայլուն մեքենայի կոթը, ապշած հայացքով նայեց ինձ:

— Լազարյան ձեմարանի՞ց...:

— Այո: Իմ մասին գիտե՞մ եյինք տվել...:

Նա յայլևս մոչինչ չտասց և անցալ իր գործին: Յերբ հաճախորդները սակավացան, յես մտտեցա հորս և ականջին տասցի նորությունը: Հայրս անմիջապես դուրս յեկալ վաճառասեղանի յետևից:

— Հովհաննես աղա, Մոսկվայից...:

— Գիտեմ,— ընդհատեց նա.— տղադ ասալ: Գնա, բայց շուտ արի:—Ապա, յերբ մենք արդեն դուրս եյինք գալիս, նա, վատ թաղցրած հեղձանքով, ավելացրեց.— Մեծ գործեր են բռնում, Գրիգոր: Իմ տղաս Լազարյան ձեմարանի մասին չի ել մտածում, բայց դու...:

Հայրս հարգալիբ կանգ առալ՝ շարունակությունը լսելու, բայց վորովհետեւ շարունակությունը չեղալ, նա նորից քայլեց:

— Իու գնա տուն, յես դրազրին վերցնեմ գամ,—ասաց նա ճանապարհին:

3

Գրազիրը ծրարը ձեռքն առալ, տնտղեց, հետո բռնեց յաչքերի դիմաց և գտալ նրա դատարկ սրունդը: Գրպանից հանեց գրչահատ դանակը, բացեց, զգուշությամբ կտրեց ծրարը: Հայրս գործից շտապ տուն յեկած, մայրս լվացքը կիսատ թողած և վեր քշտած թեփերով, յես սրտատրոփ ու կարմրած դեմքով, սպասում եյինք իմ ճակատագրի բացվելուն:

Գրազիրը բուխն ու ցուցամատն զգուշությամբ կոխեց ծրարի մեջ, հանեց թուղթը, բաց յարեց:

Մեր խնդրագիրն էր: Յես եյին ուղարկել...:

Գրագիրը թուղթը թեք բռնեց և կարդաց նրա ծայրին կարմիր թանաքով արված մակագրութիւնը.

— Մերժված ե: Մոսկվա, այսինչ ամի, ի ձեմարանս Կաղարյան...

Հայրս նստեց:

Տիրեց խոր լռութիւն:

Իմ աչքերս լցվեցին վիրավորանքի դառն արցունքներով:

— Բոլորովին չեն ընդունում, — Հարցրեց մայրս:

Գրագիրը նորից կարդաց.

— Մերժված ե: Մոսկվա, այսինչ ամի, ի ձեմարանս...

— Ե՛հ, յես ուշացա, դնամ, — ասաց Հայրս ու վեր կացավ:

Յես զգացի, վոր այլևս անպետք են թե դիմումը, թե ձեղքված ծրարը: Դիմումն ինձ հարկավոր չեր. — այնտեղ իմ հասցեյին վատ բան կար գրված: Իսկ ծրարը, վոր ընկած էր սեղանին, յես խփույն վերցրի:

Հայրս մոտեցավ ինձ, գլուխս շոյեց.

— Ճակատագիրդ էր, բայր ջան...

Հեկեկոցս զսպած, յես ձեռքումս շուռ ու մուռ եյի տալիս ծրարը: Յեվ հանկարծ, նրա միջից, սահեց ու ընկավ հատակին մի փոքրիկ, շատ փոքրիկ թղթի կտոր: Յես վայրկենապես կուացա, վերցրի, նայեցի...

— Ի՞նչ բան ե, — արագ դեպի ինձ յեկան Հայրս ու մայրս:

Լուսանկար էր. — ինձ նման մի փոքրիկ տղայի փոքրիկ լուսանկար:

Հայրս խլեց նայեց:

— Ռուս ե, — ասաց նա:

— Ռուս ե, — հաստատեց գրագիրը:

Ծնողներս հարցական նայեցին նրան:

— Սխալմամբ են ուղարկել, — բացատրեց գրագիրը, — խառնել են: Ուրիշ խնդրագրի մեջ ե գրված յեղել:

— Ուրեմն սովորաբար խնդրագրի հետ նըկա՞ր էլ են ուղարկում:

— Այդպես ե յերևում, — ծամծամեց գրագիրը:

Մայրս գունատիւց.

— Բա մենք ինչու չուղարկեցինք... Չլինի՞ դրա համար են մերժել...

Գրագիրը ներողամիտ ժպտաց և ցույց տալով ձեռքումս բռնած լուսանկարը, հարցրեց.

— Ապա սրա՞ն ինչու համար են մերժել: Լուսանկարը վոչ մի դեր չունի: Մարդու ծագումն ու դիրքը իր լուսանկարն ե: Ախր յես ձեզ դեռ այն ժամանակ ասացի...

Նա, հորս հետ միասին դուրս յեկավ: Իսկ մայրս, լվացքը մոռանալով, անմիջապես նըստեց և դառն արտասուեց...

Քա՛նի տարի շարունակ, քա՛նի-քա՛նի անգամ յես նայում եյի իմ բախտակցի փոքրիկ լուսանկարին և տխուր մտածում — քեզ ել են մերժել, իմ անձանոթ, հեռու ընկեր... Քո խնդրագրի վրա նույնպես, դեռ հազիվ կարդացած, կարմիր թանաքով խազմզել են համառոտ մակագրությունը: Յեվ քեզ վերադարձրնելիս, քո խնդրագրի հետ նույնպես, յերևի ուղարկել են մի անձանոթ բախտակցի լուսանկար...:

Քա՛նի-քա՛նի անգամ, յերբ դպրոցից ինձ տուն եյին ուղարկում՝ թողակը վճարած չլինելու համար և յես, սենյակի մի անկյունը քաշված, ինձ գլուխ եյի վորբ ու մենակ ամբողջ աշխարհում, — այդ փոքրիկ լուսանկարը դալիս եր հիշեցնելու, վոր յես սխալում եմ, վոր այնտեղ նույնպես, այն անձանոթ հեռվում, կա ինձ նման մերժված մի բախտընկեր: Յեվ նրանից բացի, կան հազարներ ինձ նման, նրա նման...:

Մի որ հանկարծ, հայրս ինձ հարցրեց. — Իվանդ ի՞նչ արիր:

— Պահել եմ, — ասացի յես, և այդ սրբանից, անսնուն լուսանկարն ունեցավ իր անունը: Այդ սրվանից, յես իմ մենակ բույներին նրա հետ խոսելիս, գիմում եյի նրան Իվան անունով: Անցան տարիներ, յես բոլորովին մո-

ռացու հորս հարցն ու իմ պատասխանը և ինձ համար մնաց հանելուկ, թե յես վո՞րտեղից գիտեմ այդ ուս տղայի անունը: Հայրս մեռել եր. — նրան հարցնել չեյի կարող: Մայրս, վշտերից պառաված, մոռացել եր անցյալի բոլոր մանրամասնությունները: Միայն վերջերում, յերբ յես արդեն սովորել եյի ուսերեն լեզուն և արդեն գիտեյի, վոր «Իվանը» ուսի հոմանիչ անունն է, յես հանկարծ հիշեցի ամբողջ պատմությունը: Յեվ նորից, իմ անտեսանելի, բայց սիրելի ընկերը կորավ այն հազարանուն Իվանի ծովի մեջ, վորբ տարածված եր Վլադիվոստոկից — Ռոստով, Արխանգելսկից — Որենբուրգ... Այժմ, յերբ փոխվել եր թե իմ և թե նրա բախտը, յես բուն ցանկություն ունեյի անտեղ նրան, ցույց տալ լուսանկարը, խոսել նրա հետ իմ և իր տխուր մանկության մասին...:

Յերբ սրանից հինգ տարի անաջ Մոսկվան ինձ ել ընդունեց իր հարյուր հազարավոր ուսանողների շարքը, յերբ ուսանող դարձա իմ սիրած ինստիտուտում, — յես հաճախ եյի նայում ընկերներին դեմքերին՝ «Իվանին» գտնելու հույսով: Յես գիտեյի, յես կասկած անգամ չունեյի, վոր նա այնտեղ եր, նույն քաղաքում, գուցե և մեր ինստիտուտում, գուցե և նստած եր իմ կողքին: Առաջին ա-

միաներին, դեռ պարզ ու միամիտ, յես Հա-
ճախ եյի պատմում իմ ուսու ընկերներին Լա-
զարյան ձեմարանի պատմութիւնը, հուսա-
լով, թե կգտնեմ նրան, իմ վաղեմի բախտա-
կցին: Նրանք նույնպես, իրենց հերթին, պատ-
մում եյին իրենց կյանքի տխուր պատմու-
թիւնները, բայց Լազարյան ձեմարանի մեր-
ժված յերեւան նրանց մեջ չկար...

Հետո սակայն, յես գլխի ընկա, վոր ան-
հընար է, վոր յես չեմ կարող գտնել մեն մի
հատիկ «Իվանին» բովանդակ Սորհրդային
Միութեան մեծ ովկիանոսի մեջ... Յեղալ մի
վայրկյան, յերբ յես տխրեցի այդ բանի հա-
մար: Իսկ հետո, յերբ մտածեցի, իմ ժպիտս
յեկավ իմ միամիտ տխրութեան վրա: Իվանը,
իմ մանկութեան բախտընկերը, ի հարկէ, այդ-
տեղ էր, — Մոսկվայի, Լենինգրադի, Սարկովի,
Տաշքենդի, Թիֆլիսի, Յերևանի ինստիտուտ-
ներում: Նա նստած էր իմ կողքին, Ահմադ-
ների, Վալիկոների, մյուսների կողքին: Մեր
բոլորի, բոլորի ճակատի վրա, մի ժամանակ
գրված էր յեղել. — մերժված է, — և յայժմ
ջնջվել էր այդ ճակատագիրը: Մոսկվայում,
Մինսկում, Բաղդում, Յերևանում, նույնիսկ
ամենախորրիկ ավանների ու գյուղերի տարրա-
կան դպրոցներում, մենք, մեծ ովկիանոսի բո-
լոր մերժվածներս, արդեն հանդիպել եյինք
իրար...

Կ Ա Ր Տ Ո Յ Ի Լ

Յերբ բանվորական մաստակարարման վնա-
սարարները բռնվեցին, յես ուսանում եյի Մոս-
կվայում: Մեր ամբողջ ինստիտուտը հուզ-
ված էր անամոթ վոճրագործութեան առթիւ
և վողջ աշխատավորութեան հետ միասին՝ պա-
հանջում էր խիստ պատիժ հանցագործներին:
Ամեն առավոտ մենք կարդում եյինք «Պրալ-
զան» և զայրութով լցվում նոր հայտնաբեր-
ված փաստերի հանդեպ: Շատ բան, վոր մին-
չև այդ մեզ համար պարզ չէր, դարձավ հըս-
տակ ու հասկանալի: Մենք իմացանք, թե ին-
չու եյին կուտակվում շուտ փչացող մթերք-
ները Մոսկվայի կայարաններում և ինչու նո-
բանոր վազոններով շարունակում եյին գալ
կաղամբն ու կարտոֆիլը, կանաչին ու միր-
գը: Չպատրաստելով պահեստներ ու մանան-
ներ, վնասարարներն անընդհատ կոնվեյերով
մայրաքաղաք եյին լցնում այդ բոլորը՝ չղա-

տարկված վագոնների մեջ նեխացնելու համար...

Ու մի յերեկո, մեր վրդովմունքը, վոր թափառում էր յերսիկներում, գտավ իր արտահայտությունը:

— Գնանք, — սկսեց բղավել մի ուսանող՝ միջանցքում, — գնանք դատարկենք բարձած վագոնները, վորպեսզի մեր թշնամիները չուրախանան: Շտապ դատարկել բոլոր վագոնները՝ վեր ե բանվորներին ուժերից...

Մի քանի հոգի գնացին բջիջ՝ քարտուղարին հայտնելու մեր ցանկությունը: Դիրեկտորի մեղ ազատեց վերջին գասախոսությունից, խոսք սունելով, վոր այդ չի անդրադառնա մեր փսղվա վրա:

Մեզանից մի քանիսն իսկույն ցրվեցին հանրակացարանները՝ այնտեղ գտնվող ուսանողներին տեղեկացնելու: Մենք յենթադրում եյինք, վոր ուսանողության գոնե կեսը կհավաքվի: Սակայն մենք սխալվել եյինք: Վորոչումն ընդունելուց կես ժամ անց՝ հավաքվեցին համարյա բոլորը: Բացակայում եյին միայն մի քանիսը, վորոնք այնպիսիներն եյին, վոր յեթե հանկարծ դային, մենք անչափ պիտի դարձանայինք: Դրտում սլանում եյին հարյուրավոր տրամվայները և փչում էր աչնանավերջի կտրող՝ քամին: Յերգելով մեր անխուսափելի ինտերնացիոնալը, մենք դուրս յե-

լանք պայքարի՝ հանուն անարածույժ կարտոֆիլի և հասարակ կազմաբի:

Յերկաթապատ մի դուռ մեր ինտիտուտի հանդեպ՝ շարունակ գրայում էր մեր ուշադրությունը. — նա միշտ փակ էր: Ու միայն այդ յերեկո պարզվեց նրա գաղտնիքը, յերբ մենք ուղեվորովեցինք դեպի ապրանքային կայարաններից մեկը: Այդ դարպասի յետևից ձգվում էր ամենակարճ ճանապարհը դեպի այնտեղ:

Խուռն հորձանքով մենք ներս մտանք: Նեղ պատերի միջև սեղմված՝ մենք հորդեցինք դեպի աշխատանքի և հերոսության վայրը: Մենք քայլում եյինք և զգում, վոր մեր յետանդի դիմաց բեռնաթափ կլինեն բոլոր վագոնները: Մենք յերգում եյինք և հարձակվում:

Յերբ տեղ հասանք՝ մեղ արդեն կանխել էր մի այլ ինտիտուտ: Սակայն աշխատանք շատ էր մնացել թե մեզ և թե մեր կրկնակի թվի համար: Ոգտագործելով այնտեղ գտնվողներին փորձը, մենք նույնպես գույգերի բաժանվեցինք և ցրվեցինք վագոնները: Մեկը պետք է կարտոֆիլը լցնեք պարկի մեջ, իսկ մյուսը շալակեր և տաններ պահեստ: Թիակները ձեռքերին՝ աղջիկները լցնում եյին պարկ պարկի յետևից և աղաները կրում եյին այն: Դիտելով աշխատանքի յեն հանկարծ զգացի,



վոր մենակ եմ և անգործ: Արագ (անցա վագո- նաչարի յերկայնքով, բայց վոչ վոք չուզեց ընդունել ինձ: «Ընկեր գտիր», — բղավում էյին նրանք և հայտնում, վոր իրենք յազատ չեն: Վերադառնալիս, մի անմարդ վագոնի խավա- րում յես տեսա յերկու պլպլացող կետեր: Ներս ցատկեցի: Մարդ եր: Յերևի պրոֆեսոր:

— Յեկա՞ր, — ասաց նա, կարծես սպասում եր ինձ. — յես մի լավ ընկեր ունեյի, բայց սրի- կան անցավ հարևան վագոնը: Այնտեղ աղջիկ է աշխատում: Դե, իհարկե, աղջկա ընկերակ- ցութիւնն ամեն դեպքում գերադասելի յե քա- ոասունհինգամյա տղամարդուց:

Յես սրտանց ծիծաղեցի և վերցրի պարկը:

— Պրոֆեսո՞ր ես:

— Վոչ, — պատասխանեց նա:

Յերբ վերադարձա պահեստից, նա մյուս պարկն արդեն լցրել եր: Շարակեցի և նախքան գնալը՝ հարցրի.

— Դու կարտոֆիլ սիրու՞մ ես:

— Շա՛տ, — յերկարացրեց նա այդ բառը՝ աչքերը փակելով:

Յես նորից ծիծաղեցի և ասացի.

— Շատակերն ես յերևում...

— Ինչ ճիշտ է՝ ճիշտ է — ժպտաց նա, — ու- տել սիրում եմ:

— Սուպի մե՞ջ, — զրգռեցի նրա ախորժա- կը:

— Չե, ինչու՞, կարելի յե նաև տապակած ձևով: — Բայց հանկարծ, կարծես սթափվելով, հրահանգեց. — շատ մի խոսիր, տա՛ր:

Այս անգամին յես շուտ վերադարձա: Նա պարկը դեռ չեր լցրել: Ու մինչդեռ նա գործը կավարտեր, յես շարունակեցի ընդահատված խոսակցութիւնը.

— Տեսնում ես սրիկաներին: Ուզում էյին մեզ սոված թողնել: Դրանց մեկ առ մեկ խփել և հարկավոր...:

— Ինչո՞ւ, կարելի յե նաև յերկ-յերկու խփել, — կատակեց նա. — դնդակ չփչացնելու համար այդպես ավելի հարմար է: Դե վեր- ցրու: Հո ծանր չի՞...

Յես չպատասխանեցի: Յես դայրացած էյի մնասարարների վրա: Վերցրի պարկը և քա- լեցի: Ճանապարհը մութն եր և տեղ-տեղ՝ ցե- խոտ: Զգուշանալով, վոր չսայթաքվեմ, յես հասա պահեստի դռանը: Վար դրի բռուս, վեր- ցրի մի դատարկված սխարկ և քայլեցի: Վա- գոնի մոտ մի քիչ կանգ առա՝ հանգստանալու համար: Շարունակեցի հարցուփորձս:

— Կուսակցակա՞ն ես:

— Այո:

— Հի՞ն:

— Հին:

Նայեցի նրա ակնոցներին:

— Խո ոպորտունիստ չե՞ս:

—Վոչ,—պատասխանեց նա,—ուպորաու-
նիսս չեմ:

Յես ամբարցրի դժտիս և թքելով Կաթերիս
մեջ ու չփելով նրանք իրար, պարկը վերցրի:

—Չախ ե՞լ չես:

—Չախ ել չեմ,—լսեցի նրա ձայնն իմ յե-
տեից: Բավական հոգնել էյի: Յերը վերադար-
ձաւ և արագ շնչում էյի, նա նայեց ինձ և
ցատկեց ներքև:

— Հիմի ել յես կչալակեմ:

—Կարո՞ղ ես փոր: Ախր դու արդեն...

Նա չե՞րդեց փոր չարունակեմ:

— Այդ դու յես՝ «արդեն»: Յես դեռ «ար-
դեն» չեմ:

— Դե լա՛վ, մի նեղանա,— ծիծաղեցի
յես և նրան կտար գցելու համար մինչև պը-
տունգները լիքը ցրի պարկը:

Ակնոցավորը, փոր լուռ հետևում եր իմ
չարժումներին հանգիստ ձայնով առաջար-
կեց.

— Միայն մի փոքր տեղ թող՝ բռնելու
համար, իսկ մնացածի համար, շորհակա-
լու թյուն:

Յես յես գցեցի մի քանի փոքր կարտո-
ֆիլ և պարկը հրեցի նրա մեջքին: Նա բեռը
տարավ աշտակս, ինչպես ղիմացկուն ձի:

— Իհարկե կտանես,— բղավեցի յես նրա
յետեից.— դու հինգ փթից ավել ես:

Յես ցրեցի մյուս պարկը: Կարտոֆիլը
վազոնի մեջ՝ զգալիորեն պակասել եր: Ինձ
աշտակս եր թփում, թե մենք բոլորից լավ
ենք աշխատում: Վազոնի մոտ, կիսախավարի
մեջ նորից պլպլացին ընկերոջս ակնոցները:

— Լցրե՞լ ես: Ասրես: Բայց յես ավել
չեմ:

— Ինչի՞ց ավել չես:

— Հինգ փթից: Հենց յերեկ կշռվել եմ:

Նա ձեռքը տարավ ծոցի գրպանը և դուրս
հանեց աշտակից թղթի փոքր մի կտոր:—
Կարգա:

Նրա ձայնի մեջ բողոք կար իմ գեմ: Յես
վառեցի լուցկին և կարգացի: Մարդը ճիշտ
եր ասում:

— Դե պարկը տուր,— ասաց նա հանգըտ-
տացած:

Վեցերորդ անգամ վերադառնալիս, նա
թռավ վազոնի մեջ:

— Ել չեմ կարող: Վար իջիր, սիրելիս:

Յես ներքև իջա:

— Դու հա՞յ ես,— հարցրեց հանկարծ:

— Այո:

Յես ձեռքերս մեկնեցի՝ պարկը շտակե-
լու համար: Բայց նա՛ դեռ չտվեց: Բան եր
ուզում ասել:

— Ի՞նչպես եք ապրում:

— Հիմա վոչինչ, լավ ենք: Դե պարկը տուր:

— Լավ յեղեք, սիրելիս,— մրմնջաց նա քաղցր տոնով.— Թող բոլոր աշխատավորները լավ լինեն: Յերբ կվերադառնաս Հայաստան, պատմիր յայս ամենն այնտեղ և բոլոր ուժերդ նվիրիր սոցիալիզմի գործին: Հասկանո՞ւմ ես, բոլոր ուժերդ: Քեզ լավ պահիր, վոր չըհյուժովես և բոլոր ուժերդ... Դե վերցրու պարկը, ուշ ե...

Յես գնացի: Պահեստն արդեն լցվել էր: Այժմ կարտոֆիլը պետք էր տեղափոխել հարևան շենքը: Յես քայլերս ուղղեցի այնտեղ և վերադարձի ճանապարհին հետաքրքրվեցի.— չե՞ն ավարտել ուրիշները մեզանից առաջ: Սակայն վոչվոք ազատ կանգնած չեր և բոլոր վագոնների մեջ մարդիկ կային:

Նոր պարկը շալակելով՝ յես սկսեցի մտածել ակնոցավորի խոսքերի վրա: Ճիշտ է ասում նա: Մեզ հարկավոր է շատ բան իմանալ և շատ բան անել: Իմ յերկրին հարկավոր են կրթված մարդիկ: Մարդիկ՝ վորոնք կըրթվել են «կապիտալի» վրա և կարտոֆիլի պարկի տակ...

— Չե՞ս մրտում,— հարցրեց ակնոցավորն ինձ.— ձեզ մոտ հիմա այնքա՛ն տաք է: Յերևի սովոր չես ցրաի:

— Կսովորեմ,— բացականչեցի յես:— Ա-

րիստոկրատ չեմ: Շոք էլ եմ տեսել, ցուրտ էլ...

Յերբ վերադառնալիս լսեցի Թիակի գրող գոռը վագոնի հատակին, ուրախ հարցրի.

— Վերջացրի՞նք:

— Այո,— պատասխանեց նա: Այս մի քանի հատն էլ տար: Համենայն դեպս՝ յերկու կելո կլինի: Ափսոս ե...

— Վերադարձի ճանապարհին յես բավական ուշացա: Ինձ հանդիպեց մի ծանոթ ուսանողուհի և մենք սկսեցինք մտքեր փոխանակել լուսնի ու քաղաքատնտեսության մասին: Հետո նա ինձանից վերցրեց հետևյալ որվա դապախոսությունների ցուցակը և մենք բաժանվեցինք: Վագոնների մեջ բոլորն արդեն վերջացրել էին աշխատանքները և ուրախ գրուցում էին: Յես մտաեցա իմ վագոնին: Ընկերս նստել էր մի արկղի վրա և ծխում էր: Յես դեռ հազիվ էյի բացել բերանս՝ խոսելու համար, յերբ մի ուսանող կողքներիցս անցնելով, շտապ բացականչեց:

— Հավաքվեցեք պլատֆորմի վրա թռուցիկ միտինդի:

Յես ու ընկերս արագ դնացինք: Բոլորը խիտ հավաքվել էին այնտեղ և սպասում էին: Մի քանի հոգի դատարկ արկղներից շտապ ամբիոն էին պատրաստում: Յես առաջ խցկվեցի և ընկերս՝ իմ յետևից: Հետո

առաջանալն այլևս անհնար դարձավ և մենք
կանգ առանք: Մրկղների վրայից մի ուսանող
բղավեց.

— Թոռուցիկ միտինգը հայտարարվում է
բացված: Ձայնը տրվում է ընկեր այսինչին...

Յեվ այստեղ, նա տվեց մի մեծ ղեկա-
վարի անուն:

Նրա բառերը խլացան միահամուռ ու-
ռայի և ծափերի մեջ: Բոլորը կանգնեցին մատ-
ների ծայրերին՝ հռետորին տեսնելու համար:
Իսկ ընկերս, փորձեց նույնիսկ առաջ անցնել:

— Կանգնիր, այստեղից ել կտեսնենք,
առաջարկեցի յես:

— Չե, — ժպտաց նա հանցավոր. — յես
պիտի գնամ...

— Ինչո՞ւ յես գնում:

Նա սիրալիք ծիծաղեց.

— Սխր հռետորը յես եմ:



470

ԳԻՆԸ ՅԾ ԿՈՊ.

«Ազգային գրադարան»



NL0313433

22129